





տարեկապէս համաձայն եմ, բայց վերջին դիտողութիւնը քիչ մը տարօրինակ կը թուի ինծի: «Ահաք բան չկայ...»: Կարելի՞ բան է որ բան մը չըլլայ, մեղա՛յ, մեղա՛յ, լեզուս չորնայ, բայց ես կ'ըսեմ թէ այն օրը որ հայկական թերթերուն մէջ զադրին թաղականական, հոգաբարձական, պատրիարքական, կաթողիկոսական, կուսակցական, անձնական, ակական ու հակականական վէճերը՝ կը նշանակէ որ հայ ազգը զադրած է գոյութիւն ունենալէ: Աստուած մի՛ արասցէ:

Ամէն պարագայի ես երկու կողմերն ալ մտիկ ընելով հասայ այն եզրակացութեան՝ որ եթէ մեր հրապարակագիրները քիչ մը իրենց կոչումին գիտակցութիւնն ունենան, այսինքն ըմբռնեն թէ (եթէ ըմբռնելու կարողութիւն ունին) իրենք ժողովուրդին բարոյական ու մտային զարգացման դաստիարակներն են, եւ այս ուղղութեամբ ջանան թո՛ւք տալ նախ իրենք իրենց դէպի գեղեցիկն ու օգտակարը՝ ընթերցողները համակրանքով պիտի կապուին իրենց հրատարակած թերթերուն:

Այս մասին աւելորդ է միտք յղենցնել. անցնինք:

Երրորդ մտահոգութիւնը՝ քերթին անուն մը գտնելն է, անանկ անուն մը՝ որ քաղաք բան մը ունենայ իր մէջ:

Ահա՛ ասիկա բաւական դժուար հանելուկ մըն է: Համբերութիւն, քիչ մը բարի կամքով կարելի է լուծել:

Աշխարհիս ծայրէն՝ արեւելքէն սկըսայ շրջան ընել: Աւա՛ղ, շատ ուշ էր, որովհետեւ ինծմէ առաջ արդէն ուրիշներ տիրացեր էին ըլլա՛յ «Արեւելք»ին՝ ըլլա՛յ «Արշալոյս»ին: Հասայ «Հայաստան», ան ալ գրաւուած էր, «Երեւան»՝ նմանապէս: «Սեւան», «Մասիս», «Արարատ», «Արաքս», «Արագած»՝ ուրիշներու հրամանին տակ էին. «Արեւ»ին տակ մնալ կարելի չէր, «Լոյս»էն, «Յոյս»էն խեր չկար. քայլերս ուղղեցի դէպի «Յառաջ»՝ բայց չուտով նահանջեցի «Մարտիոց»ի հարուածներուն տակ: Հէքեթային «Մարմարա»յի կապուտագեղ ջուրերուն վրայէն երազի պէս անցաւ «Ժամանակ»ը: Ընդարձակ «Ասպարէզ»ին մէջ գաղափարային խուլ «Պայքար» մը կար ոտնակոխ «Հայրենիք»ին դէմ: «Օր»ը իրիկուն եղաւ, «Արեւմուտք»ի վրայ հայկական արեւը ծածկը-

ւեցաւ ամպերուն ետեւ ու մնացի առանց «Ճառագայթ»ի: Լուսին չկար, մութ դիւր չէր, «Հորիզոն»ին վրայ տեսայ «Շանթ»եր՝ առանց կայծակի...: Ե՛վրէ՛քա ճը՛չացի ուրախութեամբ ու թերթիս անունը «Կայծակ» դրի:

Իսկոյն գործի լծուեցայ, գիշերը ցորեկին խառնելով յօդուածներ գրեցի բարոյական, գիտական, գեղարուեստական: Ընդարձակ տեղ տուի ազգային ու միջազգային լուրերուն եւ վէճի տեղ՝ սիրոյ ու եղբայրութեան սերմեր ցանցի:

Յետոյ մէկի տեղ երկու գորդ ծախեցի, «Կայծակ»իս համար թուղթ ու մեկան դրեցի, ալ ի՛նչ ծախքեր, ի՛նչ ծախքեր, մուսա մարեցաւ մինչեւ որ ան լոյս տեսաւ:

Չափազանց յոգնեցայ, բայց դոնէ վըստս էի որ «Կայծակ»ս ամէնուն հաճելի պիտի ըլլար իր ճոխ պարունակութեամբ եւ մաքուր տպագրութեամբ:

Իրօք զրկածներէս եւ ո՛չ մէկը ետ դարձաւ, ապացոյց՝ թէ ան մե՛ծ ընդունելութիւն դտած էր: Բոլոր թերթերը միաձայն ողջունեցին անոր ծնունդը ու երկա՛ր կեանք մաղթեցին: Շատ ուրախացայ, շատ շնորհակալ եմ:

Բայց «Կայծակ»իս երկրորդ թիւին ծախքերը հողալու համար ծախու ուրիշ գորդ չունէի, հետեւաբար անհամբեր կը սպասէի արեւելքէն, արեւմուտքէն, հիւսիսէն, հարաւէն, օդէն, ծովէն ու ցամաքէն անուննիս քաջուած գոյնդոյն չէքերու՝ որոնք կ'ուշանային...:

Մինչ այդ պաշտօնական վերտառութեամբ՝ կնքուած վարդադոյն պահարան մը հասաւ. հապճեպով բացի կարծելով որ «Կայծակ»իս մէջ դրուելիք իւրոտ-պատու աղդ մը ըլլար:

Ի՛նչ յուսախարութիւն...: Ոստիկանութեան կողմէ զրկուած գետինն անցնելիք հարցարան մըն էր. ահա թէ ի՛նչ կ'ուզէր. կը խնդրուի ճշգրիտ կերպով պատասխանել ստորեւ նշանակուած հետեւեալ երեք հարցումներուն եւ անմիջապէս վերադարձնել.

1. - Ի՞նչ է կայծակին ուղղութիւնը. կայծակ չէ՞ն տեսած այս մարդիկը, բայց ու սաստիկ ջղայնացած՝ հարցումին դէմ դրեցի. «Կայծակին ուղղութիւնը կ'ըլլայ

չիւլ-չիտակ, երբեմն հորիզոնական ու նաեւ զիւլ-զակ: Յաճախ ծխնելոյցներէն ներս կը մտնէ, սենեակներուն մէջ սանձարձակ շրջան կ'ընէ... մի՛ դպչիք՝ թէ չէ անուխ կը կտրիք»:

2. - Ո՞վ է կայծակին տէրը.

«Սոսկալի ուրուական մը՝ որուն օձիքէն չէ կրցած բռնել հոչակաւորն Շէրլոք - Հոլմս»:

3. - Ո՞վ է կայծակին պատասխանատուն.

«Որոշ է որ ամպը ամպին զարնուելով կայծակ առաջ կու գայ: Դժբախտաբար Ս. Գրոց Բաուրիքին Կ. Գիրը պարունակող հատորը դեռ չեմ ստացած, ուստի վստահեմ կրնար ըսել թէ կայծակին պատասխանատուն ո՞վ է, սակայն կը համարիմ որ եթէ Սիւրիացի մը չէ՝ անպատճառ Չէնկիլերցի մը պէտք է ըլլայ»:

Այսպէս գրեցի ու ճամբեցի փորձանք հարցարանը: Թէեւ խօսքը մէջերինս՝ կայծակին բուն պատասխանատուն կարելոտած տարատու էր, սակայն նոր մը չընամ ի՞նչպէս կրնայի ոստիկանութեան չանձնել վայն: Միւս կողմանէ ոստիկանութիւնը ինչո՞ւ քիթը խոթեր էր իմ գործիս մէջ: Մեր թաղին չունէր գիշերը մինչեւ լոյս հաշկելով՝ չեն ձգեր որ վայրկեան մը հանդիստ քնանամ, թո՛ղ երթան անոնց մը հանդը զսպեն, կամ անոնց անզգամ տիրուհիները կարգի բերեն:

Բայց հիւսա ամէնէն աւելի զիս շահադրողը այն գոյնդոյն չէքերն են որ միշտ կ'ուշանան: Ինչո՞ւ չեն դար: «Կայծակ»իս տպագրութեան համար գրաշարին, տպագրիչին, թուղթին, մեկանին դրամը ո՛ւրիշ պիտի ճարեմ: Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները» երբ հարուստի մը օձիքին փակչէին՝ դոնէ իրաւունք ունէին մուրալու իրրեւ մտաւորական, դրազտ ու բանաստեղծ, մինչդեռ ես (ազճիկ քեզի կ'ըսեմ՝ հարս դուն հայկեր) ո՛չ միայն այդ գեղեցիկ ձիւքերէն զուրկ եմ՝ այլ տարատ անդամ չունիմ...:

Որհնուրդ հարցնելու համար ինքզինքս խոչնդուելով դացի հարիւրամեայ «Բաղ-ճալէկ»ի խմբագրատունը: Գրադէտ-բանաստեղծ խմբագրապետ Հայրէ՛, ձեռադրներով ու խոշոր խոշոր հատորներով

ծածկուած ընդարձակ սեղանի մը առջեւ նստած սիրուն կղզեակին ծաղիկներու բուրբուրով ու թռչուններու դալալիկով՝ խրթին ու խորհախորհուրդ նարեկը մեր գիտցած աշխարհաբարով կը թարգմանէր ներդաշնակ տաղաչափութեամբ մը:

Ծոցէս «Կայծակ» մը հանելով անոր երկարեցի: Անիկա հայրենասիրական խօսքերով քաջալերեց ձեռնարկս, համբերութիւն եւ յաջողութիւն մաղթեց, ու «Կայծակ»ը երկու ձեռքերուն մէջ առնելով օրհնեց որպէսզի ո՛ւնէ վնաս չհասցնէ նորահայտ բերքերուն...: Յետոյ բան մը բաժանալու պէս իր անաչառ քննադատի աշփոտելու պէս իր անաչառ քննադատի վրէպերը պտտցուց թերթիս չորս էջերուն վրայ ու դառնալով ինծի կարեկցական նայուածքով մը ըսաւ.

— Օրհնա՛՛՛, ամէնէն կարեւորը մոռցեր ես, ընթերցողները որո՞ւ եւ ո՞ւր պիտի շրջեն իրենց բաժնեգիրը:

— Ի՞նչ ըսել է որո՞ւ, պատասխանեցի զարմացած, ուղղակի ինծի, ե՛ս եմ «Կայծակ»ին տէրը, տնօրէնը, խմբագիրը, բեռնակիրը, ամէն ինչը...:

Եւ սակայն աւելորդ էր զարմանքս ու զայրոյթս, Արմաշիւրեան իրաւունք ունէր, թերթիս ճակտին վրայ անունս եւ հասցէս թերթիս խելք չէի ըրեր: — Տխմա՛ր, գետեղելու խելք չէի ըրեր: — Տխմա՛ր, ըսի ես ինծի, ճակտէս հոսող պաղ քրտինքը սրբելով, փոխանակ գլուխդ ճաթեղընելով բարոյական, դրական եւ այլ յօդուածներ գրելու, եւ կամ սիրոյ սերմեր ցանելու՝ թող խոշոր գրերով անունդ գրեցնելու՝ որպէսզի կարգացողներն ալ գիտնան թէ նպատակդ ի՛նչ է...:

Սրտիս ցաւէն մատուս այնքան ուժով խառնեցի որ եղունգս արմատէն փրթաւ: Անկլօծի որ եղունգս քարկղի ընկերութեան թնձուիրանեան քարկղի ընկերութեան հետեւէն աւելի ծանր էր այս սխալին իրենց անքնները: Մոսսատէզ եւ Մորիսոն իրենց լանքները պաշտպանելու համար գէթ դէմ չաճերը պաշտպանելու, կը կառնէին, կը առնէին, իրարու կը սպառնան ու սրբապաշտան, իրարու կը սպառնան ու սրբապաշտան կամ այլաբան սիրտս բանամ: սպառնամ կամ այլաբան սիրտս բանամ:

Սոցոմ-Գոմո՛ր. ամպը ամպին զարնը՝

ւեցաւ ու կայծակը գլխուս պայթեցաւ...:

ՏԱՆԳԻ